Արձանագրություն 3

«ՄԱՏ-ԳՀԾՁԲ-09/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

16.03.2024թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Մուրադյան /գնահատող/

Գնահատող հանձնաժողովի անդամ՝ Անի Շահվերդյան/գնահատող/
Անի Սիմոնյան/գնահատող/
Արմեն Մկրտչյան/բացող/
Գալուստ Փիլթակյան/բացող/

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Նանե Կարապետյան

1. «ՄԱՏ-ԳՀԾՁԲ-09/24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցի հետ պայմանագիր չկնքվելու մասին:

1.1 Գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն՝ «Ալեքսիմ» ՍՊԸ-ն ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված մասնակցին 09.03.2024թ. էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել էր պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝ առաջարկելով Ծանուցումը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից կնքված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները: Սահմանված ժամկետում «Ալեքսիմ» ՍՊԸ-ի կողմից ստորագրված պայմանագիրը և որակավորումները չեն ներկայացվել: Հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 9.5 կետը՝ հանձնաժողովը որոշեց զրկել «Ալեքսիմ» ՍՊԸ-ին պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ

2.1 Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Սահակ Սերվիս» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած (ընտրված) մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

3.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության նոր տեքստը և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3.2 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման ապահովումը (գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով) և պայմանագրի ապահովումը (գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով)՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Scanned with ACE Scanner

4. Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի մասին

4.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը և նույն հոդվածի 2-րդ մասը՝ հանձնաժողովն որոշեց «Ալեքսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով դիմել պատվիրատուի ղեկավարին:

Գնահատող հանձնաժողով՝

_____ **Տաթևիկ Մուրադյան/նախագահ/**

_____ **Անի Շահվերդյան**

_____ **Անի Սիմոնյան**

_____ **Արմեն Մկրտչյան**

_____ **Գալուստ Փիլթակյան**

_____ **Նանե Կարապետյան/քարտուղար/**

Scanned with ACE Scanner